

ԹԵՌԵՔՆ ՊԵՏՔԵ ՊԱՐԱՊԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ .

4. Աշակերտների պարապմանց տեւողութիւնը իւրեանց հասակի եւ զարգացման համեմատ: — 2. Դասամիջոցներ (պերեմբայ): — 5. Դասի տեւողութիւնը. ստորին դասարաններում աշակերտների հանդիսաց դասերի միջոցում (ժամանակ): — 4, Դասամիջոցի տեւողութիւնը: — 3, Դասամիջոցում քաղած օգուտը: — 6, Ցնային պարապմունքների տեւողութիւնը: — 7, Ցնային պարապմունքների կապը դասարանականի հետ: — 8, Վարժապետների համաժողութիւնը նրանցից իւրաքանչյուրի աշակերտներին տուած աշխատութիւնների (դասերի) քանակութեան մասին:

Մտաւոր պարապմունքներով շատ կամ քիչ պարապելու կարողութիւնը՝ կախուած է ինչպէս մարդիս Փիզիքական և Հոգեկան ոյժերից, նոյնպէս և գլխաւորաբար նորա մտաւոր պարապմունքներին սովոր լինելուց:

Անչափահաս և մտաւոր երկար պարապմունքներին անսովոր տղաներից ևս պահանջվումէ այնքան ջանք պարապմունքները շարունակելու, (ինչպէս երկու երկք ժամ): Ինչքան որ չափահաս և մտաւոր աշխատութիւնների սովոր երիտասարդից պահանջվումէ շարունակ հինգ և վեց ժամում:

Սորանից երեսումէ, որ անհիմն կլիներ երեխաններին և չափահաս աշակերտներին մտաւոր պարապման համար հաւասար ժամանակ նշանակել, որովհետեւ չափահասներն ամբապն զուելով՝ սովոր կլինին մտաւոր աշխատութիւններով պարապելու:

Եւ որովհետեւ աշակերտների ոյժերը զօրացնելը և երկարատև մտաւոր զբաղմունքներով պարապելուն վարժացնելը՝ լինումէ հետզհետէ (սակաւառ սակաւ): Ուստի և մտաւոր զբաղմունքներով պարապելու միջոցները պէտքէ աստիճանաբար նշանակենք: Ինչքան որ աշակերտները փոքրահասակ են և ինչքան որ նորա քիչ են սովորած մտաւոր գործունեութեան, այնքան էլ ամենօրեայ մտաւոր զբաղմունքների ժամանակը պէտքէ քիչ լինի: և ինչքան որ նոքա կը կազդաւրուին և կսովորեն մտաւոր զբաղմունքներով պարապել, այնքան այս ժամանակը պէտքէ կամաց կամաց աւելցնել:

Եօթ, ուժը արեկան երեխաններին բաւական է երկու ժամ՝ միայն պարապել ուսումնական ուժից տասը արեկան աշակերտներին ուսումնարանում պարապելու համար կարելի է նշանակել երեք ժամ: Սորանից միքիչ միծ՝ 11—13 տարեկան աշակերտները կարող են պարապել կ ժամ: իսկ այն հասակ անած աշակերտները որոնք միջնակարգ ուսումնարաններում և նոցա բարձր դասարաններում են լինում: կարող են դասարանում օրական 5 և երբեմն մինչեւ 6 ժամ պարապել: *)

(*) Այն դասարաններում ուր աշակերտներին պարապելու համար քիչ ժամանակ է նշանակուած, առհասարակ աշակերտները վերջին դուերից անմիջապէս յետոյ շատ շատապ ստուն են գնաւամ:

Այսպէս պարագմունքները աշակերտների հասակի սովորութեան և մտաւոր աշխատութեան համապատասխան լինելու այն օգուտ ունի որ աշակերտները չեն ճնշուի իւրեանց համար անսովոր մտաւոր պարագմունքների ժամանակ. և զպրոցը չվեսաելով աշակերտների առողջութեան՝ կատարած կլինի այն խնդիրը, ի հարկէ այն ժամանակ՝ երբ կրթութեան համար նշանակուած ժամանակը անօգուտ չի անցնիլ աշակերտների համար, այլ ընդհակառակն կը նուիրուի օգտակար ուսումնական պարագմունքների. Յայտնի է որ անհամեմատ օգտաւէտ է եթէ մանուկը զպրոցում 2· 3 ժամ՝ միայ և այդ ժամանակ ուսումնով պարապի, քան թէ նստի ուսումնարանում 5—6 ժամ, և այդքան ժամանակում ևս իսկապէս 2 և 3 ժամից աւելի չը պարապի. Աերջին դեպքում աշակերտն ստանումէ շափազանց վնասակար սովորութիւն՝ որ է անգործ ժամանակ անցկացնել, նստել և ոչինչ չանել:

2. Բայց և վերեւում տարբեր հասակ ունեցող աշակերտների պարագմունքների համար նշանակուած ժամանակը՝ ի հարկէ ծանր և տաժանելի կլինէր՝ եթէ որ նոքա անընդհատ այդ բոլոր ժամանակում պարապէին. — Նստած երկու երեք ժամ՝ անընդհատ պարապելը ոչ միայն անչափահաս տղայի համար տաղտկալի է, ոյլեւ շափահասի համար. — Մի որոշ ժամանակուայ գործունեութիւնից յետոյ՝ գործարանական և հոգեկան ոյժերը պէտք է որ հանգստանան: իսկ երբ որ այս պահանջը չէ կատարվում, ջլատվում, մուլանում են. կամ մինչեւ անգամ բոլորովին այլ ևս չեն կարողանում շարունակել իւրեանց գործունեութիւնը, երբ մարդու մի քիչ հանգստանումէ, նորից կարողանումէ շարունակել իւր աշխատութիւնը.

Սորանից յայտնի երեւումէ, որ դասամիջոցներն անհրաժեշտ են, որոնք նշանակուած են աշակերտներին հանգստեան համար. Դասամիջոցները հանգստեան համար լինելով՝ միենոյն ժամանակ աշակերտների պարագմունքները զպրոցում գասերի բաժանուելուն մի միջոց են դառնում:

3. Դասը՝ ոչ շատ կարծ և ոչ շատ երկար պիտի տեի, որովհետեւ երբ ժամանակը կարծ է լինում՝ ուսուցիչն է նեղվում. իսկ երբ երկար, այն ժամանակ տաղտկալի է զառնում: Բացի դորանից, երբ որ դասը շատ երկար զոր օրինակ ժամ՝ ու կէս կամ երկու ժամ՝ է տեսում, միշտ օգուտով չեն անցկացնում ժամանակը, և այսպիսի դասերն առհասարակ այնքան մեծ օգուտ չեն տալիս աշակերտների. պարագմունքների յաջողակութիւնը կախուած է ոչ թէ միայն ժամանակից այլ և ինչ եռանգով շարունակուելուց:

Սովորաբար ուսումնարաններում իւրաքանչիւր դասին մի ժամ են նշանակում: Ազգային լուսաւորութեան նախարարին պատկանող ուսումնարաններում (օրինակ զիմնազիաներում) դասին 59 բոպէն բաւական է համարվում:

Իսկապէս հարկաւոր էր, որ դասի տեսողութեան ժամանակը համապատասխան լինէր տշակերտների հասակին. ինչքան որ աշակերտները փոք-

բահասակ են՝ այնքան աւելի կարճ պիտի լինին դասելը. օրինակ 7—8 տարեկան երեխաների համար կարելի է նշանակել ամեն մի դասին կէս ժամ, կամ մօտ 40 րոպէ:

Բայց դասերի տևողութեան զանազանութիւնից՝ ուսումնարանի բոլոր զասարաններում կը յառաջանային կարգապահական շատ անյարմարութիւններ. Այսպէս օրինակ փոքրահասակ աշակերտներն իւրեանց դասը վերջացնելով՝ դասամիջոցին դուրս կը գտն դասարանից և կը խանգարեն իւրեանց աղաղակներով բարձր դասարանների պարապմունքը. Սակայն ուսուցիչը ստորին դասարաններում, ինչպէս վերևն ասացինք, երբ կը նկատի երեխաների տաղտկութիւնը, յոգնածութիւնը, դասի ժամանակ նոցա մի քիչ հանգիստ պիտի տայ. պիտի առաջարկէ նոցա մի քանի անգամ վեր կէնալ, նստել, մարմնամարզական մի քանի տեսակ վարժութիւններ անել. Երեխաները մի քիչ հանգստանալուց յետոյ, պիտի շարունակեն իւրեանց պարապմունքները:

4. Դասամիջոցն էլ ոչ երկար և ոչ կարճ պիտի լինի. երբ շատ կարճ է լինում ժամանակը՝ նպատակին չէ ծառայում. իսկ երկար դասամիջոցները շատ ժամանակ են խլում. Դասամիջոցների համար պէտք է նշանակել այնքան ժամանակ՝ որ աշակերտները կարողանան զուարժանալ, հանգստանալ. և նորոգելով իւրեանց ոյժերը պատրաստումն հիւեեալ դասին. Ենչքան որ աշակերտները շատ երկար ժամանակ դասի են նստում և ինչքան որ առաւել յոգնած են լինում, այնքան աւելի երկար ժամանակ է հարկաւոր դասամիջոցի համար. ա. դասից յետոյ 5—10 վայրկեան դասամիջոց՝ բաւական է. բ. դասից յետոյ 10—15 վ. չ. դասից յետոյ նախաճաշի ժամանակ (որ մօտ 12 ժամին է լինում) պէտք է դասամիջոցն աւելի երկար նշանակել, առ նուազն կէս ժամ:

Այդ ժամանակը աշակերտները կարող են նախաճաշել և հանգստանալ, այնքան՝ որ առանց զժուարութեան կը կարողանան շարունակել մնացեալ դասերը. Իսկ ու դասից յետոյ դասամիջոցի համար կարելի է նշանակել 5—10 վայրկեան *):

5. Դասամիջոցներն աշակերտները պէտք է գործածեն հանգստեան համար. — Սովորաբար աշակերտները դասամիջոցներին դասատանից դուրս են գալիս. (բացի դասապետից (օրապահ), որը պէտք է հոգս տանէ դասարանի մաքրութեան և օդափոխութեան համար,) դահլիճը (զալը) կամ միջանցքը (կօրրիծը). և կամ՝ լաւ եղանակին բակ են դուրս գալիս. Ուր ոմանք զրոնումն, ոմանք ևս մարմնամարզական կրթութիւններ են անում. ոմանք ևս կարծատե խաղեր են սկսում զօր. խաղումն գնդակ **): —

(*) Այստեղ նշանակուած է դասամիջոցների միջին թիւը. Զանազան ուսումնաբաններում դասամիջոցները մի եւ նոյն չեն, այլ տարբեր:

(**) Օգտակար է՝ որ ուսուցիչը կամ վերակացուն սովորցնէ աշակերտներին իւր գիտեցած երեխապական խաղերը. Երեխաներն անշուշտ յարմար միջոցում օգուտ կը քաղեն իւրեանց տեսած խաղերից.

Մէկ խօսքով բռլորը հանգիստ են տալիս ինչպէս իւրիանց փիզիքական ոյնպէս և հոգեկան ոյժերինց որոնք յոգնած կլինին դաստանում՝ ունեցած պարագմունքից:

Առուցիչը կամ վերակացուն պէտքէ ուշադրութիւն դարձնէ, որ աշակերտները նպատակայարմար օգուտ քաղեն դասամիջոցից. Առողջ և կայտառ երիխանները սովորաբար սիրումն դասամիջոցներին դուրս դալ դահլիճ կամ բագ՝ հանգստեան ժամանակից օգուտ քաղելու համար. Խսկթոյլ՝ ինչպէս և վախիոտ աշակերտները շատ անգամ ակամայ են դուրս դալիս դասարանից. Նոքա առաւել լաւ են համարում դասամիջոցին իւրեանց տեղը դասարանում՝ մնալ. Ահա ոյսովիսի աշակերտներին ուսուցիչը կամ վերակացուն պարտական է առաջարկել դուրս գնալ զրոնելու և ժարման օդ ծծելու:

Այնպէս ևս պատահումէ որ աշակերտներից ոմանք, չենց որ սկսվումէ դասամիջոցը, փիխանակ հարկաւոր հանգիստն առնելու, առնումն զիրքը և պատրաստում են հետեւեալ դասը. Այս բանն այնքան ցանկալի չէ. որովհետեւ բացի նորանից՝ որ վեասումէ սոսողութեան, դասամիջոցի տարիք օգուտը վատ է ներգործում՝ ուսման վերայ. Աշակերտը դասամիջոցին հանգստացած չլինելով, յոդնածութիւնից չէ կարող լաւ ուշադրութիւն դարձնել և աշխոյժ ունենալ դասի ժամանակը.

Տուած դասերը, իսկապէս՝ աշակերտները պէտքէ որ՝ տանը պատրաստեն, և ոչ թէ յայս գնեն դասամիջոցների ժամանակ պատրաստելու վերայ.

6. Հարկաւոր է մի քիչ ևս աշակերտների տանը ինչքան պարապելու մասին ասել.

Որպէս զի ուսումը չվեասէ աշակերտների առողջութեանը՝ և չձնչէ նոցա հոգեկան ոյժերը անհրաժեշտ է՝ որ ոչ միայն ուսումնաբան, այլև տանը կատարելիք պարապմունքների տեսողութիւնը համապատասխան լինել նոցա գործարանական և հոգեկան ոյժերին:

Կարծիք չկայ՝ որ աշակերտներին արուած պարապմունքները տանը պատրաստեն օգնումէ ուսման յաջողութեանը. Բայց պէտքէ չափաւոր օգուտ քաղել այդ միջոցից. Չգէտքէ մոռանալ, որ երիխաններին՝ ուսումնաբանի մէջ ունեցած պարապմունքից յետոյ՝ հարկաւոր է հանգուտանալ. և որ նոցտ անհրաժեշտ է մի քիչ աւելի շարժմանք անել. չգէտքէ մոռանալ նոյնպէս որ նոցակույցարմար չի լինի չափազանց կարճել այն ժամանակը, որն որ անհրաժեշտ է երեխային շրջապատող անձերին (ծնողներին և բարեկամներին) նորա վերայ դաստիարակական և կրթական ազդեցութիւն ունենալու համար.

Տանն ունեցած պարապմունքների տեսողութիւնը պէտքէ կամաց կամաց շատացնել, և պէտքէ միջին թուով՝ ուսումնաբանում պարապած ժամանակի թիվ կամ կեսի չափ լինի. այն՝ որ ուսումնաբաններում՝ այս կամ այն հսսակի համար բաւական է համարվում. — Այսովէս 8 տարեկան երիխանների համար տանը լինելիք պարապմունքը մի ժամից աւելի չպիտի

լինի, 9—10 տարեկանների համար մօտ ժամանելու, 11—13 տարեկանների համար բաւական է երկու ժամ, Միջին և բարձր դասարանների աշակերտները կարող են տանը 2—3 ժամ՝ պարագել:

7. Ուսուցչի տանը՝ պատրաստելու համար տուած աշխատութիւնները, պէտք է սերտ կազուած լինին գասարանական պարագմունքների հետ, որովհետեւ գասարանական պարագմունքները նախապատրաստութիւն են աշակերտների տանը լինելիք պարագմունքների համար։ Ուսուցիչն այն ժամանակ աշակերտներին պարագմունք է տալիս, երբ իմանումէ, որ նորալու են հասկացած այն տեղեկութիւնները, որոնք անհրաժեշտ են պարագմունքները վճռելու համար։ և չեն հանդիպի անտանելի և տաժանելի զժուարութիւնների պատրաստելու ժամանակ։

Խսկապէս առելով՝ աշակերտների անային ուսումնական պարագմունքը պէտք է լինի կամ լաւ ուսանել այն՝ ինչ որ բոլորովին հասկացել է և որ հարկաւոր է սովորել, և կամ այնպիսի վարժութիւններ անել, որոնց նպատակն է զարգացնել այն ուսակութիւնը՝ (կարողութիւնը) որով կարողանայ յարմարացնել վարժութեամբ իւրացուցած զիտութիւնները։ և կամ՝ այնպիսի աշխատութիւններ պիտի լինին, որոնց նպատակն է զարգացնել աշակերտներին մտաւոր մշակութեան ձանապահչով, նոցա իւրացուցած ուսումնական նիւթերով։ Ուսուցիչն ոչ միայն պիտի կանգ տռնէ բովանդակութիւն կազմով մաքերը բացատրելու, որոնք դասարանից դուրս եղած պարագմունքների էութիւնն ու բովանդակութիւնն են կազմում։ այլ նոյնպէս պիտի բացատրէ որքանութիւնը (որևէ)։ որով պէտք է նորա կատարեն իւրեանց աշխատութիւնը։

Մի կողմ թողնելով արգէն զրաւոր վարժութիւնները, որոնց պատրաստելու համար երեխանները շատ անգամ կարօտում են բացատրութեան, թէ ինչպէս պէտք է կատարել աշխատութիւնը, նոյնպէս օգտակար է նոցացոյց տալ, թէ ինչպէս պէտք սովորել որևէ բերանացի սովորելիք բանը։ — Հակառակ դէմքում, այսինքն երբ որ ուսուցիչը ցոյց չէ տալիս թէ ինչպէս պէտք սովորել, այն պէտք է ուսուցիչը ցոյց չէ տալիս թէ ինչպէս պէտք սովորել, այն ժամանակ երեխանները կորցնումն հարկաւոր եղածից անհամեմատ շատ ժամանակ։ և այն ևս շատ անգամ ապարդին է լինում։

8. — Եթէ մի գասարանում ուսուցանումն մի քանի ուսուցիչներ՝ այն ժամանակ որպէս զի նոցա տուած տանը կատարելիք աշխատութիւնները բոլորը միասին շատ ծանրաբեռնած չլինին աշակերտ երին, և որոնց պատրաստելու համար շատ ժամանակ չհարկաւորուի նոցանից պէտք ուսուցիչները համար շատ ժամանակ է մէկն ինչքան բան պէտք տայ՝ զասարանից բուր, տանը պատրաստելու համար Ա. յստեսակ համաձայնութիւնները պէտք է որ ուսուցական պարբերական ժողովներում (մանկավարժական խորհուրդներում) լինին։

Գեղեց. ձեւ. Ա. Լուսակի Ռազմական

(հշարանական) պատրաստելու մասին առաջարկ ՍՏԵՓԱՆՆՈՅԻ ԿԱՆԱՅԵԱՆՑ